սել էր սեւին տալ թուխ ընչացքով: Արեւից այրոած երեսը ստացել էր մուգ-դեղնապղնձի գոյն, բայց սեւ աչքերը դեռ վառւում էին նոյն բոցով, որպէս տեսել էի առաջ: Ինձ երեւում էր, թէ այն գեղեցիկ աչքերը աւելի խոշորացել էին եւ կարծես մի կիսավայրենի բնաւորութիւն էին ստացել:

Ճանապարհին նա խիստ սակաւ խօսեց ինձ հետ. մի անգամ միայն հարցրեց. «միթէ՞ դեռ, կենդանի է այն հրէշը»... Այդ հարցմունքը մեր վարժապետի, տէր Թոդիկի մասին էր: Երբ ես սկսեցի նկարագրել դպրոցի դրութիւնը, նա ինձ չէր լսում, իմ պատմութիւնը նրան չէր հետաքրքրում, կարծես նա բոլորը գիտէր: Եւ իրաւ, ի՞նչ էր փոխոել տասն եւ երկու տարոայ ընթացքում, որ նրան հետաքրքիր լինէր, — բոլորը նոյնն էր...

Ինձ հանդիպելը, որ սկզբում այնքան ուրախութիւն ազդեց Կարօյի մէջ, երեւում էր, յետոյ պատճառ տոեց խորին տխրութեան: Նրա մտայոյզ լռութիւնն ինձ առիթ էր տալիս այսպէս կարծել: Բայց ո՛չ, ես սխալւում էի, Կարօն նոյն ժամուն բոլորովին ուրիշ բանի վրայ էր մտածում եւ իմ ներկայութիւնը կարծես թէ նրան նկատելի չէր: Նա մոռացաւ ինձ... Ինձ խիստ անախորժ թոեց այդ սառնասրտութիւնը նրա կողմից, եւ ես չկարողանալով համբերել, հարցրի.

— Ու՞ր ենք գնում:

— Ա՜խ, մոռացայ ասել... քեզ հիմա կը տանեմ մի տեղ, ուր կը տեսնես քո երկու հին ընկերներին: Դու խօ չե՞ս մոռացել Ասլանին եւ Սագօյին:

— Ասլանին եւ Սագոյի՞ն... — բացականչեցի ես, չկարողանալով զսպել իմ ուրախութիւնը, որ այնքան օտարոտի էր երեւում, համեմատելով իմ ուղեկցի սառնասրտութեան հետ: — Որտե՞ղ են նրանք, շուտո՞վ կը տեսնեմ:

— Շուտով, — պատասխանեց նա, շարունակելով իր ընթացքը:

Գիշերը լուսնկայ էր: Ես պարզ որոշում էի շրջապատող առարկաները. քաղաքը բաւական հեռու մնացել էր մեր ետեւից: Խոսրովիոյ այգիները, գիշերային մառախուղի մէջ, երեւում էին ծածկոած արծաթի քօղով, որպէս թէ մրափում էին խորին անշարժութեամբ: Խիստ ախորժ կերպով լսելի էր լինում առոակների խոխոջմունքը, որոնք հոսում էին կանաչ արտերի մօտով: Օդը, տոգորոած բուսականների անուշահոտութեամբ, ծաւալւում էր իր թարմ, խոնաւ արտաշնչութեան մէջ:

Մենք շարունակում էինք ճանապարհը միեւնոյն ուղղութեամբ: Ինձ տակաւին յայտնի չէր, թէ ուր էինք գնում: Յանկարծ Կարօն ընդհատեց մեր մէջ տիրող լռութիւնը եւ դարձաւ դէպ ինձ այդ խօսքերով.